ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

-- հոկտեմբերի 2020 թվականի №--
քաղ. Երևան

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ Ա. ՂԱՐԻԲՅԱՆ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ №16/1 ՏԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնքի Ա. Ղարիբյան 4-րդ փողոցի №16/1 տան (այսուհետ՝ առանձնատուն) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումն առանց միացման վճարի գանձման իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն ներկայացրած՝ 2020 թվականի հուլիսի 27-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ հասցեագրված առանձնատան բնակիչ Նունուֆար Մարգարյանի (այսուհետ՝ Դիմող անձ) դիմումը,

բ) Հայաստանի Հանրապետության սոցիալական աջակցության Արտաշատի տարածքային գործակալության կողմից տրամադրված 2020 թվականի հուլիսի 14-ի №1314 տեղեկանքը, որի համաձայն Դիմող անձը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և նրա ընտանիքի անապահովության միավորը կազմում է 39,46,

գ) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդի համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 2020 թվականի հուլիսի 29-ի տեղեկանքը, որի համաձայն՝ Դիմող անձը բնակվում է առանձնատանը,

դ) Դիմող անձի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի օգոստոսի 14-ի №531-20 գրությունները, որոնց համաձայն վերջիններս չեն առարկում առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է առանց միացման վճարի գանձման.

2) չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հոկտեմբերի 2020թ.